

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ, տ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտաշխատող

ԱՐՄԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ, տ.գ.թ.

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
կրտսեր գիտաշխատող

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԸ ՍԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո մի շարք երկրների ղեկավարներ ձեռնամուխ եղան հետխորհրդային տարածքի փլատակների վրա մի նոր տնտեսական և քաղաքական համակարգ վեր խոյացնելու, որը կգար փոխարինելու «խորհրդային կարգերին», բայց իր բնույթով ու բովանդակությամբ ավելի համահունչ կլինեին համաշխարհային տնտեսությանը և նրանում արձանագրվող զարգացումներին: Սակայն նոր համակարգի ստեղծումը գնաց բավականին դժվարին ու ժամանակի տեսանկյունից բավականին երկար ճանապարհով, ինչը պայմանավորված էր մի շարք նպաստող և արգելակող գործոններով:

Նպաստող գործոններից ամենախոստումը բազմամյա համատեղ կեցությունն ու գործունեությունն էր, որը ԽՍՀՄ երկրների տնտեսությունների տարբեր ճյուղերի միջև ստեղծել էր տնտեսական և տեխնոլոգիական բավականին մեծ փոխկապվածություն, ինչպես նաև լուրջ հիմքեր հետագա համագործակցություն ապահովելու տեսանկյունից:

Արգելակող գործոնների թվում ամենաազդեցիկներից կարելի է համարել այն, որ 70-ամյա տնտեսական և քաղաքական կախվածությունից հետո ձեռք բերված անկախությունը հետխորհրդային երկրներին ոգևորեց ամրապնդել իրենց ինքնավարությունը և պետականությունը: Եվ, քանի որ ցանկացած ինտեգրացիա, նույնիսկ ամենաչափավորը, ենթադրում է որոշակի իրավունքների փոխանցում ինտեգրացիոն միավորման միասնական օրգանին, որն իր հերթին ենթադրում է որոշակի ոլորտներում սուվերենիտետի ինքնակամ սահմանափակում, ուստի ավելի մեծ ջանքեր էր և է պահանջում հետխորհրդային երկրներից՝ շատ հարցերում ընդհանուր հայտարարի գալու համար:

Դրան զուգահեռ գնալով մեծանում էր ԱՊՀ երկրների ֆինանսական և քաղաքական կախվածությունն Արևմուտքից (դա ավելի նկատելի է դարձել նոր հազարամյակում), ինչը նույնպես իր հերթին չէր կարող խոչընդոտ չհանդիսանալ հետխորհրդային տարածքում ընթացող ինտեգրացիոն գործընթացների համար:

Այս ոչ միանշանակ, իրար հակադրող գործոնները նպաստեցին այն բանին, որ հետխորհրդային տարածքի վրա սկսեցին ձևավորվել տնտեսական, քաղաքական և ռազմական բովանդակությամբ նոր ինտեգրացիոն խմբավորումներ, որոնք հիմքերի ամրության տեսանկյունից նույնպես կրում են ոչ միանշանակ բնույթ:

Հետխորհրդային տարածքում ստեղծվել են այնպիսի ինտեգրացիոն միավորումներ, ինչպիսիք են՝ Եվրասիական տնտեսական ընկերակցությունը, Ռուսաստանի և Բելառուսի դաշնային պետությունը, ԳՈՒԲԱՄ-ը (1995թ. Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեյջանը և Մոլդովան հիմնադրեցին այս ոչ ֆորմալ միջպետական միավորումը՝ որպես հակակշիռ Եվրասիական տնտեսական ընկերակցությանը), «Կենտրոնական-ասիական ընկերակցություն» կազմակերպությունը, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ, որը հիմնադրվել է 2002թ. Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Դազախստանի, Դրոգստանի և Տաջիկստանի մասնակցությամբ):

Վերը նշված ինտեգրացիոն միավորումներից ամենանշանակալին Եվրասիական տնտեսական ընկերակցությունն է, որի ստեղծման հիմքերը դրվել են շուրջ 20 տարի առաջ: Դեռևս 1995թ. Ռուսաստանը,

Ղազախստանը, Բելառուսը, իսկ ավելի ուշ Ղրղզստանը, Ուզբեկստանը և Տաջիկստանը ստորագրեցին համաձայնագիր Մաքսային միություն ստեղծելու վերաբերյալ, որը հետագայում վերածվեց Եվրասիական տնտեսական ընկերակցության:

Մաքսային միության (ՄՄ) ստեղծումը ժամանակակից տեսքով սկսվեց 2006թ., երբ Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի ղեկավարները պայմանավորվեցին ստեղծել լիամասշտաբ և լիարժեք Մաքսային միություն: Այս պայմանավորվածությունն էլ 2007թ. հիմք դարձավ, որպեսզի նույն առաջնորդները պայմանագիր ստորագրեն միասնական մաքսային տարածք ստեղծելու վերաբերյալ և բոլոր մասնակից երկրների համապատասխան մարմինները լուրջ աշխատանքներ իրականացնեն համապատասխան իրավական բազա ստեղծելու ուղղությամբ: 2010թ. հուլիսի 1-ից ուժի մեջ մտան Մաքսային միության մաքսային օրենսդրությունը և այլ իրավական ակտեր, ինչն էլ այսօր ապահովում է Մաքսային միության անդամ երեք երկրների մաքսային համակարգերի ներդաշնակ գործունեությունը¹:

2011թ. ստորագրվեց պայմանագիր Եվրասիական տնտեսական հանձնաժողով ստեղծելու համար, ինչպես նաև Բարձրագույն Եվրասիական խորհրդի կողմից որոշվեց ուժի մեջ մտցնել բոլոր այն միջազգային պայմանագրերը, որոնք անհրաժեշտ էին միասնական տնտեսական տարածք ձևավորելու համար: 2012թ. սկսեցին գործել ինչպես Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, այնպես էլ միասնական տնտեսական տարածքը: 2015թ. հունվարի 1-ից ակնկալվում է ստեղծել Եվրասիական տնտեսական միություն:

Մաքսային միության, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության ստեղծման ժամանակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև 2007թ. այս կառույցների ստեղծմանն ուղղված աշխատանքները ժամանակային առումով եղել են բավականին մեծ խզումներով, ինչը նպաստել է հետխորհրդային երկրների միջև առևտրատնտեսական կապերի համեմատական թուլացմանն ու այլ երկրների հետ հարաբերությունների ուժեղացմանը: Բացի հետխորհրդային երկրներից այլ երկրների հետ կապերի հաստատումը ինչ-որ առումներով նպաստել է այդ երկրներում առկա ներուժի ավելի արդյունավետ օգտագործմանը: Դա ավելի վառ կերպով նկատելի է դառնում աղյուսակ 1-ի տվյալների ուսումնասիրության արդյունքում:

Աղյուսակ 1

Մաքսային միության անդամ երկրների և Հայաստանի ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ընթացիկ զմեռի (մլրդ. ԱՄՆ դոլար)²

		2001	2004	2007	2010	2012
Հայաստան	ՀՆԱ	2,12	3,58	9,21	9,26	9,95
	Արտահանում	0,54	1,06	1,77	1,93	2,49
	Ներմուծում	0,98	1,62	3,6	4,2	4,9
Ռուսաստան	ՀՆԱ	306,6	591	1300	1525	2015
	Արտահանում	113,12	203,41	392,04	445,51	593,11
	Ներմուծում	74,25	131	280	322,37	446,09
Ղազախստան	ՀՆԱ	22,15	43,15	104,8	148,1	203,5
	Արտահանում	10,17	22,65	51,84	65,08	96,88
	Ներմուծում	10,4	18,95	44,82	43,25	61,73
Բելառուս	ՀՆԱ	12,35	23,14	45,28	55,22	63,27
	Արտահանում	8,25	15,71	27,59	29,97	51,65
	Ներմուծում	8,68	17,18	30,43	37,49	48,78

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ 1990-ական թվականները հետխորհրդային բոլոր երկրների համար եղել են անկայունության և շուկայական տնտեսությանն անցման ու այդ համակարգի կայացմանն անհրաժեշտ ինստիտուտների ու ենթակառուցվածքների ձևավորման

¹ Могилевский Р., Таможенный союз Беларуси, Казахстан и России: создание и отклонение торговли в Центральной Азии в 2010-2011 гг., Доклад, №12, 2013 г.

² www.worldbank.org

տարիներ, ապա 2000-ական թթ. այդ առումով եղել են ավելի կայուն, և, հետևաբար, այդ ժամանակաշրջանի ցուցանիշներն ավելի լավ են արտահայտում վերոնշյալ ներուժի դրսևորումը:

Այսպես, եթե դիտարկենք հետխորհրդային 4 երկրների՝ Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի (վերջին 3 երկրներն հանդիսանում են Մաքսային միության անդամ)՝ աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշների դինամիկան, ապա կարելի է տեսնել, որ շուրջ 11-12 տարիների ընթացքում այս ցուցանիշներն աճել են բազմակի անգամ:

Արտաքին աշխարհի հետ կապերի սերտացման արդյունքում Հայաստանին հաջողվել է գրանցել ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման ծավալների ավելի քան քառակի աճ: Ավելի տպավորիչ են արդյունքները մյուս երկրների դեպքում: Ռուսաստանի ՀՆԱ-ն 2001-2012թթ. աճել է մոտ 6,6 անգամ, արտահանումը՝ 5,2 անգամ, ներմուծումը՝ 6 անգամ: Ղազախստանի և Բելառուսի դեպքում ՀՆԱ-ի աճը կազմել է 9,2 և 5,1 անգամ, արտահանման դեպքում՝ 9,5 և 6,3 անգամ, իսկ ներմուծման դեպքում՝ 5,9 և 5,6 անգամ:

Այս ցուցանիշների մասն աճը հնարավորություն է տվել, որպեսզի այս երկրների ընդհանուր ՀՆԱ-ի մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում 1%-ից աճի մինչև 3,2%, արտահանման մեջ՝ 1,7%-ից 3,3%, իսկ ներմուծման մեջ՝ 1,2%-ից 2,5%:

Ինչպես կարելի է տեսնել վերը բերված թվային տվյալներից, ամենահամեստ արդյունքներն արձանագրվել են Հայաստանի պարագայում, որը 2013թ. ցանկություն հայտնեց անդամակցել Մաքսային միությանը: Ի դեպ մասն արդյունքներ ապահովվել են այն պարագայում, երբ Հայաստանն ունեցել է մեծ հնարավորություններ կապ հաստատելու ոչ միայն հետխորհրդային երկրների հետ, այլ նաև մնացյալ աշխարհի հետ: Այդ կապերի շնորհիվ հնարավոր է դարձել արդեն 2012թ. մնացյալ աշխարհի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ դարձնել ավելի քան 75%, իսկ ներմուծման մեջ՝ մոտ 70%: Նույն տարեթվի դրությամբ ԱՊՀ երկրների մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ կազմել է 24,4%, իսկ ներմուծման մեջ 31,1%, իսկ Մաքսային միության անդամ երկրների մասնաբաժինն արտահանման և ներմուծման մեջ համապատասխանաբար՝ 21% և 25,8%: Ի դեպ պետք է նշել, որ այդ 21% և 25,8%-ից 20,2% և 24,8% բաժին են ընկնում միայն Ռուսաստանի Դաշնությանը¹:

Ինչպես հայտնի է, ցանկացած ինտեգրացիոն միավորման մեջ ներգրավումը ենթադրում է երրորդ երկրների հետ ավելի սահմանափակ առևտրատնտեսական հարաբերություններ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ենթադրվում է, որ ՀՀ-ի՝ Մաքսային միության մեջ ներգրավումը կարող է հանգեցնել 3-րդ երկրների հետ առևտրի ծավալների զգալի նվազման (եթե իհարկե Հայաստանին այդ միավորման մեջ յուրահատուկ կարգավիճակ չտրվի), այդ թվում նաև ԱՊՀ այն երկրների, որոնք ընդգրկված չեն այդ միավորման մեջ: Այս պարագայում առաջանում է շատ տրամաբանական հարց՝ ինչի՞ հաշվին ՀՀ-ն կարող է փոխհատուցել այս կորուստները: Այս հարցին որոշ չափով կարելի է պատասխանել՝ բացահայտելով որոշ ապրանքախմբերի դեպքում արտահանման և ներմուծման ոլորտում ՀՀ-ի համեմատական առավելությունները Մաքսային միության անդամ-երկրների հետ:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ՄՄ անդամ-երկրներից Հայաստանի հիմնական առևտրային գործընկերն է ՌԴ-ն, որին բաժին է ընկնում ՀՀ-ից դեպի ՄՄ անդամ-երկրներ ընդհանուր արտահանման և ներմուծման 80%-ից ավելին. 2013թ. Հայաստանից դեպի ՄՄ անդամ-երկրների արտահանման (ներմուծման) միայն «Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք» ապրանքախմբի մասով է, որ ՌԴ-ն տեսակարար կշիռը կազմել է մոտ 80%, իսկ մնացած ապրանքախմբերի արտահանման (ներմուծման) մեջ ՌԴ-ն տեսակարար կշիռը կազմել է դեպի ՄՄ անդամ-երկրներ տվյալ ապրանքախմբի արտահանման (ներմուծման) 85%-ից ավելին:

Աղյուսակ 2

ՀՀ արտահանումն ու ներմուծումը ՄՄ անդամ երկրների հետ, հազար ԱՄՆ դոլար²

Ապրանքախումբ՝ ըստ SITC 4 դասակարգման	Երկրներ	Արտահանում		Ներմուծում	
		2007թ.	2013թ.	2007թ.	2013թ.
Սննդամթերք և կենդանի կենդանիներ	Բելառուս	51,1	398,0	2106,7	3631,2

¹ Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից ՀՀ ԱԿԾ տվյալների հիման վրա՝ www.armstat.am

² <https://wits.worldbank.org>

	Ղազախստան	13,2	346,7	10377,0	157,5
	Ռ-Դ	8066,0	85851,8	119846,7	193766,9
Խմիչք և ծխախոտ	Բելառուս	906,6	6781,7	3,8	226,2
	Ղազախստան	199,1	2804,5	609,2	0,0
	Ռ-Դ	33396,2	171173,5	34126,2	28830,7
Չմշակված նյութեր, սննդի համար ոչ պիտանի նյութեր՝ բացառությամբ վառելիքի	Բելառուս	66,7	205,1	0,0	129,4
	Ղազախստան	512,3	1,0	9,8	0,0
	Ռ-Դ	8799,9	4262,8	5521,9	7810,7
Հանքային վառելանյութեր, քսուքներ և հարակից նյութեր	Բելառուս	0,0	0,0	0,0	2804,6
	Ղազախստան	0,0	0,0	225979,3	14,5
	Ռ-Դ	0,0	0,0	38124,2	602169,6
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր և մեղրամոմ	Բելառուս	0,0	0,0	0,4	14,7
	Ղազախստան	0,0	0,0	0,0	0,0
	Ռ-Դ	0,0	0,0	10216,3	21835,1
Քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր	Բելառուս	298,6	228,1	1180,6	2643,4
	Ղազախստան	0,0	124,4	0,1	0,2
	Ռ-Դ	842,1	3878,9	21799,1	36901,5
Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի	Բելառուս	0,4	172,6	5346,0	14174,5
	Ղազախստան	87,9	1522,3	3315,2	484,8
	Ռ-Դ	24833,4	44831,4	132934,0	110939,7
Մեքենաներ և տրանսպորտային միջոցներ	Բելառուս	49,5	21,0	13413,0	14689,0
	Ղազախստան	1531,8	605,0	303,3	57,7
	Ռ-Դ	8345,9	8090,1	101898,2	87319,8
Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք	Բելառուս	113,1	429,1	1497,4	2530,9
	Ղազախստան	1360,5	1527,8	2,3	15,2
	Ռ-Դ	5370,1	8382,2	14310,9	9587,1

Այդուհանդերձ, ՀՀ-ից Բելառուս արտահանվող հիմնական ապրանքախմբերն են՝ «Խմիչք և ծխախոտ», «Քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր», «Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք», իսկ Ղազախստան արտահանվող ապրանքախմբերում հիմնական տեսակարար կշիռ ունեն «Խմիչք և ծխախոտ», «Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք», «Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի», «Մեքենաներ և տրանսպորտային միջոցներ», «Սննդամթերք և կենդանի կենդանիներ»: Անդրադառնալով ՀՀ ներմուծմանը՝ նշենք, որ 2013թ. Բելառուսից ներմուծվող հիմնական ապրանքախմբերն են «Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի», «Մեքենաներ և տրանսպորտային միջոցներ», «Սննդամթերք և կենդանի կենդանիներ» և «Քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր», իսկ Ղազախստանից ներմուծումը գրեթե բացակայում է, չնչին ծավալներով ներմուծվում են «Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի» և «Սննդամթերք և կենդանի կենդանիներ»: Բնական է, որ ՄՄ անդամակցելիս ՀՀ-ն չի կարող ավելացնել բոլոր ապրանքների արտահանումը, այլ միայն՝ այն ապրանքներին, որոնց արտահանման գծով ունի համեմատական առավելություն: Ուստի, անհրաժեշտ է պարզել, թե որ ապրանքների արտահանման գծով ՀՀ-ն ունի համեմատական առավելություն: Փորձելով պատասխանել վերոնշյալ հարցին՝ մենք կբացահայտենք ՀՀ-ում արտահանման տեսանկյունից համեմատական առավելություններ ունեցող ճյուղերն ու ապրանքատեսակները՝ օգտագործելով Բելլա Բալասայի կողմից մշակված մեթոդաբանությունը և հաշվարկելով բացահայտված

համեմատական առավելությունների (ԲՀԱ) ինդեքսը¹ Հայաստանի համար: Ընդ որում՝ երկիրն ունի i-րդ ապրանքի արտահանման գծով բացահայտ համեմատական առավելություն, եթե $R_i > 1$: Հենց այս մեթոդաբանությամբ էլ կհաշվարկենք արտահանման տեսանկյունից Հայաստանի ԲՀԱ ինդեքսը 2007-2013թթ. համար՝ ըստ ապրանքային խմբերի HS2002 դասակարգման (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ԲՀԱ ինդեքսը²

	2007	2013
Կենդանի կենդանիներ	4,55	2,1
Ձուկ և խեցգետնավորներ և այլ ծովային անողնաշարավորներ	0,87	4,06
Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	0,01	1,79
Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	0,18	1,87
Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ	1,98	2,16
Մուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	6,08	1,5
Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	0,62	1,05
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	3,11	3,31
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	17,98	18,93
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	4,51	20,25
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	5,68	4,36
Հանքաքար, խարամ և մոխիր	19,53	13,25
Քիմիական գործվածք	1,51	0,02
Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	0,65	3,81
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	1,69	1,79
Ապակի և դրանից իրեր	3,46	2,77
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	5,79	4,6
Սև մետաղներ	6,09	2,7
Պղինձ և դրանից իրեր	11,32	5,83
Ալյումին և դրանից իրեր	9,8	6,56
Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	16,29	12,76
Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր	5,38	0,46
Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր	0,05	1,05
Ժամացույցներ և դրանց մասեր	1,92	10,14

Իրականացված հաշվարկների հիման վրա՝ HS 2002 դասակարգմամբ 97 ապրանքախմբերից առանձնացվել են այն ապրանքախմբերը, որոնց արտահանման գծով ՀՀ-ն ունի բացահայտված համեմատական առավելություն 2007թ. կամ 2013թ.: Արդյունքում ստացվել է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ն նշված 97-ից բացահայտված համեմատական առավելություն է ունեցել 24 ապրանքախմբերի արտահանման մեջ, որոնք էլ ամփոփված են Աղյուսակ 2-ում: Համաձայն աղյուսակի տվյալների՝ 2007թ. ՀՀ-ն բացահայտված համեմատական առավելություն ունեցել է 18 ապրանքախմբերի արտահանման գծով (աղյուսակում՝ այդ ապրանքախմբերի համար ԲՀԱ ինդեքսը > 1), որոնցից 2-ի գծով՝ «Քիմիական գործվածք» և «Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր»,

¹ $R_i = (x_i/X)/(x_i^w/X^w)$, որտեղ՝ x_i -ն տվյալ երկրում i-րդ ապրանքի արտահանումն է, X -ը՝ տվյալ երկրի ընդհանուր արտահանումը, x_i^w -ն՝ i-րդ ապրանքի համաշխարհային արտահանումը, իսկ X^w -ն ընդհանուր համաշխարհային արտահանումը: Balassa, B. (1965), Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, The Manchester School, V 33, May 1965, pp. 99-123.

² Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից՝ ըստ Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների՝ <https://wits.worldbank.org>

2013թ. կորցրել է իր բացահայտված համեմատական առավելությունը, փոխարենը՝ 2013թ. ՀՀ արտահանման մեջ բացահայտված համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբերը 2007թ. համեմատ ավելացել են 6-ով՝ «Ձուկ և խեցգետնավորներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր», «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր»:

Այսպիսով, 2013թ. ՀՀ-ն արտահանման մեջ բացահայտված համեմատական առավելություն ունի 22 ապրանքախմբերի գծով, որոնցից 4-ը՝ «Հանքաքար, խարամ, մոխիր», «Սև մետաղներ», «Պղինձ և դրանից իրեր», «Ալյումին և դրանից իրեր», հանդիսանում են հանքահումքային ապրանքներ, որոնց արտահանումը մեր կարծիքով չարժե խրախուսել¹: Ուստի մնացած 18 ապրանքախմբերը հենց այն ապրանքախմբերն են, որոնց արտահանման ծավալներն ունեն աճի իրական պոտենցիալ, ինչը կարող է լավագույնս դրսևորվել ՄՄ անդամ-երկրների շուկաներ առավել ազատական մոտքի արդյունքում: Սակայն՝ արդյո՞ք նշված 18 ապրանքախմբերը հետաքրքրություն են ներկայացնում ՄՄ անդամ-երկրների համար ներմուծման տեսանկյունից: Այդ նպատակով ուսումնասիրել ենք ՄՄ անդամ-երկրների ներմուծման կառուցվածքում նշված ապրանքախմբերի ունեցած տեսակարար կշիռները: Մասնավորապես՝ «Ձուկ և խեցգետնավորներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբերը զգալի ծավալ ունեն Բելառուսի և Ռուսաստանի ներմուծման մեջ, «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր» ապրանքախմբերը՝ Ղազախստանի և Ռուսաստանի ներմուծման մեջ, «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ»-ը՝ Բելառուսի, «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և մանատիպ նյութերից» և «Ապակի և դրանից իրեր» ապրանքախմբերը՝ Ղազախստանի, «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ»-ը՝ Ռուսաստանի, իսկ «Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ» ապրանքախմբերը՝ 3 երկրների ներմուծման մեջ: Այսպիսով, նշված 18 ապրանքախմբերից 9-ը կազմում են ՄՄ անդամ-երկրների ներմուծման զգալի մասը, իսկ մյուս 9-ը ներմուծվում են ավելի քիչ ծավալով: Փաստորեն, ստացվում է, որ այն ապրանքները, որոնց արտահանման մասով Հայաստանն ունի բացահայտված համեմատական առավելություն, զգալի պահանջարկ ունեն ՄՄ անդամ-երկրներում: Ուստի, սա կարող է նոր հնարավորություն լինել ՀՀ արտահանման աճի տեսանկյունից:

¹ Ներկայումս նույնիսկ չափազանց մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրները հրաժարվում են հումքի ուղղակի արտահանումից: Իսկ առավել ևս Հայաստանի համար հումքային ապրանքների արտահանման ուղղությամբ մասնագիտացումը չի կարող նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը:

ՀՀ ԱՐՏԱԶԻՆ ԱՌԵՎՏՐԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ՕԳՈՒՏՆԵՐԸ
ՄԱԶՄԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՅԵԼՈՒ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ. Զոհրաբյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գիտաշխատող

ԱՐՄԱՆ ԶԵՐՈԲՅԱՆ, *տ.գ.թ.*

ՀՀ ԳԱԱ Մ. Զոհրաբյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
կրտսեր գիտաշխատող

Համառոտագիր

Հոդվածում ուսումնասիրվում է ՄՄ ձևավորման նախադրյալները, դիտարկվում է դրա կայացման և հետագա զարգացման հնարավորությունը: Հեղինակների կողմից համեմատական վերլուծություն է անցկացվում ՀՀ և ՄՄ անդամ-երկրների տնտեսությունների և արտաքին առևտրի զարգացման միջև: Բացահայտվում է ՀՀ արտաքին առևտրի զարգացման հեռանկարները և ցույց է տրվում, որ ՀՀ արտահանման աճի նոր հնարավորություններ կարող են ստեղծվել ՄՄ անդամակցության պարագայում: Հոդվածի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ԱՎԾ և ՀԲ վիճակագրական տվյալները:

Բանալի բառեր. ինտեգրացիա, Մարսալին միություն, ՀՆԱ, արտահանում, ներմուծում, համեմատական առավելություն, ԵվրԱԶԵՍ:

ОЖИДАЕМЫЕ ВЫГОДЫ ВНЕШНЕЙ ТОРГОВЛИ РА ПРИ ВСТУПЛЕНИИ В ТАМОЖЕННЫЙ СОЮЗ

ЛИЛИТ САРКИСЯН, *к.э.н.*

научный сотрудник
Института экономики
им. М. Котаняна НАН РА

АРМАН КЕРОБЯН, *к.э.н.*

младший научный сотрудник
Института экономики
им. М. Котаняна НАН РА

Аннотация

В статье исследуются предпосылки формирования Таможенного союза (ТС), а также рассматриваются возможности дальнейшего развития этой структуры. Авторами проводится сравнительный анализ развития внешней торговли и экономики Армении и стран-членов ТС. Раскрываются перспективы развития внешней торговли РА и показывается, что новые возможности роста экспорта РА могут быть созданы при вступлении страны в ТС. Информационной базой для статьи послужили статистические данные НСР РА и ВБ.

Ключевые слова: интеграция, Таможенный союз, ВВП, экспорт, импорт, сравнительные преимущества, ЕврАЗЭС.

EXPECTED BENEFITS OF THE FOREIGN TRADE OF THE REPUBLIC OF ARMENIA
FROM ACCESSION TO THE CUSTOMS UNION

LILIT SARGSYAN, *Candidate of Sciences (Economics)*

Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

ARMAN QEROBYAN, *Candidate of Sciences (Economics)*

Junior Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

The article studies the preconditions that led to the launch of the Customs Union (CU), discusses the evolution of the Union and the further perspectives. The authors make a comparative analysis of the economic performance, and foreign trade of Armenia and the CU member states. The article identifies the perspectives of future growth of the foreign trade of the Republic of Armenia, and shows that upon Armenia's accession to the Customs Union, the nation's foreign trade would benefit from new sources of growth. The sources of statistical data are: the National Statistical Service of the Republic of Armenia, and the World Bank (World Databank, World Development Indicators Online).

Keywords: integration, Customs Union, GDP, exports, imports, comparative advantage, EurAsEC.